# ՉԸ՛ՆՅՈՒՐՆԲԵՐԳ

Ալիևը Բաքվի դատավարությունը համեմատել է Նյուրնբերգի հետ և սխալվել բոլոր կետերում։

2026 թվականի փետրվարին, Մյունխենի անվտանգության համաժողովի ժամանակ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը France 24-ին տված հարցազրույցում արել է հետևյալ հայտարարությունը.

*«Այս մարդիկ մարդկության դեմ լուրջ հանցագործություններ են կատարել։ Պատկերացրեք Երկրորդ համաշխարհային պատերազմից և Նյուրնբերգյան դատավարություններից ու նացիստ առաջնորդների նկատմամբ մահապատժի դատավճիռներից երկու ամիս անց ոմանք ասեին՝ խնդրում ենք նրանց ազատ արձակեք»։*

Հարցազրույց վարողի հարցին, թե արդյոք համեմատությունը տեղին է, Ալիևը պատասխանել է. *«Այո՛, անկասկած։ Այն նույնիսկ ավելի վատ է, նույնիսկ ավելի վատ։ Նրանց հանցագործությունները նույնիսկ ավելի վատն էին, քան նացիստների արածները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ»։*

Երբ քաղաքական գործիչը հղում է անում պատմական մեծ նախադեպի, նա ինքնաբերաբար իրեն համեմատում է այդ նախադեպը ստեղծողների հետ։ Ալիևը դա հաշվի չի առել։ Այս հայտարարությունը հնչում է որպես ինքն իրեն ուղղված հաճոյախոսություն, սակայն ավելի ուշադիր լսելու դեպքում պարզվում է, որ դա մտավոր թակարդ է։

Նյուրնբերգի հիշատակումը մեծ նախադեպի միջոցով օրինականացման դասական հնարք է։ Հաշվարկը պարզ է. լսարանը չի ստուգի մանրամասները։ Ադրբեջանի ներքին լսարանի համար այն անխափան աշխատում է։ Սակայն միջազգային ասպարեզում՝ Մյունխենում, դա ռիսկային քայլ է, հենց այն պատճառով, որ այդ սենյակում գտնվող մարդիկ գիտեն իրենց պատմությունը։

Նյուրնբերգը պատմության մեջ այն քիչ դատավարություններից է, որն ունի հստակ, ստուգելի չափանիշներ։ Հենց դա է համեմատությունը դարձնում է այդքան հարմար քաղաքական գործիք, բայց միաժամանակ՝ նաև այդքան վտանգավոր։ Բացե՛ք միջազգային իրավունքի ցանկացած դասագիրք, և համեմատությունը կսկսի աշխատել համեմատողի դեմ։

Ստորև ներկայացված են ութ չափանիշներ. երկու դատավարությունները չեն համընկնում նույնիսկ մեկ չափանիշով։

## 1. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ. Նյուրնբերգ – այո, Բաքու – ոչ

Նյուրնբերգյան դատավարությունները (1945–1946թթ.) բաց էին ամբողջ աշխարհի համար։ Դատարանի դահլիճում ներկա էին հարյուրավոր լրագրողներ, դիվանագետներ և միջազգային դիտորդներ աշխարհի տարբեր ծայրերից։ Դատավարության արձանագրությունները հրապարակվում էին ամեն օր։ Դաշնակից տերությունները գործընթացը դարձրին հնարավորին չափ թափանցիկ։ Դա արեցին միտումնավոր, որպեսզի այն դառնա պատմական նախադեպ։

Բաքվի ռազմական դատարանը պաշտոնապես հայտարարեց, թե դատավարությունները «բաց են հանրության համար»։ Գործնականում միջազգային լրատվամիջոցներին, օտարերկրյա դեսպանատների ներկայացուցիչներին, անկախ ՀԿ-ների դիտորդներին թույլ չտվեցին մասնակցել լսումներին։ Լսումներին թույլատրվեց ներկա լինել միայն կառավարության հաստատած ցուցակով անձանց՝ տեղական, իշխանամետ լրատվամիջոցների մեկ-երկու ներկայացուցիչների։ Մեղադրական եզրակացությունների և ապացույցների զգալի մասը դասակարգվեց իբրև պետական գաղտնիք։ Ադրբեջանի պետական լրատվամիջոցները հրապարակեցին լսումների տեսագրություններ՝ թափանցիկության լիակատար բացակայության պայմաններում՝ ստեղծելով թափանցիկության տպավորություն։

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության 2025 թվականի Մամուլի ազատության համաշխարհային ինդեքսի համաձայն Ադրբեջանը 180 երկրների շարքում զբաղեցնում է 167-րդ տեղը։ Կազմակերպությունն Ալիևին նույն թվականին անվանել է «մամուլի ազատության գիշատիչ»։

**Նյուրնբերգը պետք է ամբողջ աշխարհին ցույց տար արդարությունը։ Բաքուն՝ դրա նմանակումը։**

## 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹ. Տրիբունալն ընդդեմ Ազգային ռազմական դատարանի

Նյուրնբերգյան տրիբունալը Միջազգային ռազմական տրիբունալ էր։ Դրա դատավորները ներկայացնում էին չորս տերություններ՝ ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա։ Նրանցից ոչ մեկը որևէ ամբաստանյալի դեմ գործի անմիջական կողմ չէր։ Հենց այս միջազգային կազմն էր Նյուրնբերգին տվել լեգիտիմություն. դատավճիռը կայացվել էր ոչ թե երկկողմ հակամարտության մեջ հակառակորդի, այլ միջազգային հանրության կողմից՝ ամբողջ մարդկության անունից։

Բաքվի դատավարությունը տեղի է ունեցել Ադրբեջանի ազգային ռազմական դատարանում՝ այն պետության դատարանում, որը հակամարտության անմիջական կողմ է։ Դատավորները եղել են Ադրբեջանի քաղաքացիներ, որոնք նշանակվել են մեղադրող երկրի պետական ապարատի կողմից։

Նույնիսկ աշխարհագրությունն է խոսուն։ Չորս տերություններից ոչ մեկը դատավարությունը չի տեղափոխել իր մայրաքաղաք։ Նյուրնբերգը գերմանական քաղաք է՝ նացիստական գաղափարախոսության պատմական խորհրդանիշը և նացիոնալ-սոցիալիստական կուսակցական հանրահավաքների վայրը։ Տեղի ընտրությունը կրում էր հետևյալ ուղերձը. արդարությունը չի պատկանում հաղթողներին, այն պատկանում է պատմությանը։ Բաքվում այդ սկզբունքը հակառակն էր. հակամարտության կողմ պետությունը դատում էր մյուս կողմին իր տանը, իր սեփական դատարանում, իր սեփական օրենքներով, իր սեփական դատավորներով։

**Նյուրնբերգում միջազգային հանրությունը դատեց հանցագործներին։ Բաքվում՝ հակամարտության կողմերից մեկը դատեց մյուսին։**

## 3. ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԸ

Նյուրնբերգը մեղադրական դատավճիռ կայացրեց Հերման Գյորինգի, Ռուդոլֆ Հեսի, Յոախիմ ֆոն Ռիբենտրոպի և Վիլհելմ Կեյտելի դեմ՝ մարդկանց, ովքեր կազմակերպել էին Հոլոքոստը, սանձազերծել Երկրորդ համաշխարհային պատերազմը և ստորագրել զանգվածային ոչնչացման հրամաններ։ Նրանց մեղքը փաստաթղթավորված էր նրանց սեփական հրամանների, Երրորդ Ռեյխի արխիվների և վերապրածների վկայությունների հազարավոր էջերով։

Բաքվի դատավարության ամբաստանյալների թվում է Ռուբեն Վարդանյանը։ Մարդ, որը.

• ավելի քան **1.5 միլիարդ դոլար** է ուղղորդել ամբողջ աշխարհում մարդասիրական նախագծերի.

• հիմնադրել է **«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը**՝ ծրագիր, որն ամբողջ աշխարհում իրականացրել է հարյուրավոր նախագծեր և օգնություն է տրամադրել ավելի քան 3 միլիոն մարդու։ Հարկ է նշել, որ մեղադրական եզրակացությունն ինքնին «Ավրորա» նախաձեռնությունը բնութագրում է որպես «ահաբեկչությունը ֆինանսավորող» կառույց։ Տարեկան մրցանակի ընտրող հանձնաժողովում ընդգրկված են Նոբելյան մրցանակակիրներ, ազգային խորհրդարանների անդամներ, պետությունների նախկին ղեկավարներ և միջազգային

հեղինակություն ունեցող մարդու իրավունքների առաջատար պաշտպաններ: 2025 թվականի մրցանակակիրը սուդանցի բժիշկ է, որը կյանքեր է փրկում զինված հակամարտության գոտիներում: Եթե սա համարվում է ահաբեկչության ֆինանսավորում, ապա ի՞նչն է համարվում մարդասիրական գործունեություն:

• հիմնադրել է Դիլիջանի միջազգային դպրոցը, որի շրջանավարտները ներկայացնում են 121 երկիր, որոնցից շատերն ակտիվ հակամարտության մեջ են միմյանց դեմ:

• հիմնադրել է Մոսկվայի «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցը՝ ներդրելով ավելի քան 600 միլիոն դոլար.

• վերականգնել է հայկական եկեղեցիները, Աթոս լեռան վրա գտնվող ռուսական վանք և Շուշիի Գոհար տիկնոջ Վերին մզկիթը.

• երբեք չի եղել որևէ զորամասի հրամանատար և երբեք չի զբաղեցրել զինվորական որևէ պաշտոն:

Ուշագրավ փաստ դատավարությունից. մեղադրական կողմի որևէ վկա չի հայտարարել, որ անձամբ ճանաչում է Վարդանյանին կամ երբևէ շփվել է նրա հետ: Նրանք բոլորը նրա մասին գիտեին բացառապես «լրատվամիջոցներից և սոցիալական ցանցերից»:

**Նացիստ պարագլուխները ոչնչացրել են մշակութային ու մարդկային ժառանգությունը: Վարդանյանը՝ վերականգնել է այն:**

## 4. ՄԵՂԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՃՌԻՑ ԱՌԱՋ

Նյուրնբերգում պահպանվել է անմեղության կանխավարկածը. ամբաստանյալները պաշտոնապես համարվել են անմեղ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: 24 ամբաստանյալներից երեքն արդարացվել են:

Վարդանյանի և մյուս հայ կալանավորների դեպքում նախագահ Ալիևը հրապարակավ նրանց անվանել է «հանցագործներ» առաջին լսումից դեռ շատ առաջ: Ադրբեջանի պետական լրատվամիջոցները նախաքննության ամբողջ ընթացքում համակարգված ձևով քարոզչական արշավ են իրականացրել մեղադրյալների դեմ: Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն իր իրավական կարծիքում դատավարությունը

բնութագրել է որպես «քաղաքական հետապնդում, որի նպատակն է ապալեգիտիմացնել Լեռնային Ղարաբաղի պատմական, քաղաքական և մշակութային ամբողջ ժառանգությունը»:

**Նյուրնբերգը փնտրում էր մեղքի ապացույցներ: Բաքուն մեղքը դիտարկում էր իբրև փաստ:**

## 5. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նյուրնբերգում յուրաքանչյուր ամբաստանյալ ուներ փաստաբան, որին ինքն էր ընտրել, ուներ լիարժեք հասանելիություն գործի նյութերին և ուներ դատարան վկաներ կանչելու ու խաչաձև հարցաքննություն անցկացնելու իրավունք:

Հայ կալանավորները ստացել են իրենց մեղադրական եզրակացություններն առաջին լսումներից ընդամենը մի քանի օր առաջ: Ռուբեն Վարդանյանն իր՝ ռուսերեն թերի, թարգմանչական լուրջ սխալներով լի մեղադրական եզրակացությունը ստացել է դատավարության մեկնարկից հինգ աշխատանքային օր առաջ: Գործի նյութերը 422 հատոր են: Նրա միջազգային փաստաբանին չեն տվել Ադրբեջան մուտք գործելու թույլտվություն: Անկախ վկաներ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի և Ռուսաստանի խաղաղապահ զորակազմի հրամանատարության ներկայացուցիչներին դատարան կանչելու բոլոր միջնորդությունները դատարանը մերժել է: Պաշտպանություն իրականացնելու համար անհրաժեշտ նյութերին հասանելիություն ունենալ ևս թույլ չի տրվել:

**Նյուրնբերգում պաշտպանությունն իրական էր: Բաքվում դրա նմանակումն էր:**

## 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ. 30 տարի նույն սեղանի շուրջ, ապա՝ ամբաստանյալի աթոռին

1994 թվականին Ադրբեջանը Բիշքեկի հրադադարի արձանագրությունը ստորագրել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ՝ այդպիսով ճանաչելով Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության պաշտոնական կողմ: Գրեթե 30 տարի Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը բանակցությունների առարկա էր ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համանախագահությամբ: Հենց այդ սուբյեկտի գոյությունն ինքնին եղել է միջազգային դիվանագիտական գործընթացի առարկա:

Այսօր Բաքուն պաշտոնապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բնութագրում է որպես «հանցավոր կազմակերպություն»։ Ավելին, մեղադրանքները չեն քրեականացնում բռնության կոնկրետ ակտերը՝ դրանք քրեականացնում են հենց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում քաղաքական գործառույթներ կատարելու գործողությունը՝ պաշտոն զբաղեցնելը, կառավարմանը մասնակցելը, որոշումներ կայացնելը։

Եթե Ղարաբաղն ինքնին հանցագործություն է, ապա ի՞նչ էր փորձում լուծել միջազգային հանրությունը այդ բոլոր տարիների ընթացքում։ Սա իրավական տրամաբանություն չէ։ Սա քաղաքական պատմության հետադարձ քրեականացում է դատական ձևով։

## 7. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔ. ՄԱԿ-ը Լեռնային Ղարաբաղի մասին երբեք ի՞նչ չի ասել

Նյուրնբերգը հետապնդել է ամբողջ միջազգային հանրության կողմից որպես այդպիսին ճանաչված հանցագործությունները՝ Հոլոքոստի կազմակերպումը, ագրեսիվ պատերազմները, զանգվածային մահապատիժները։ Իրավական հիմքը համընդհանուր էր, հենց այդ պատճառով էլ դատարանը դարձավ ժամանակակից միջազգային իրավունքի անկյունաքարը։

Բաքվում դատավարությունները թիրախավորել են չճանաչված, բայց, ամենակարևորը, **երբեք անօրինական չհայտարարված հանրապետության** պաշտոնյաների գործողությունները։ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը երբեք չի ընդունել բանաձև, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բնութագրում էր որպես անօրինական ռեժիմ։ Սա ոչ թե վրիպում էր, այլ իրավական դիրքորոշում։ Երբ ՄԱԿ-ը անհրաժեշտ է համարել դիմել այդպիսի քայլի, գործել է բացահայտ. 1983 թվականին Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը հայտարարվել է անօրինական՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 541 բանաձևի համաձայն, և անդամ պետություններին կոչ է արվել չճանաչել այն։ Նման գործողություններ երբեք չեն ձեռնարկվել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ։

Միջազգային հանրությունը ոչ թե պարզապես ձեռնպահ է մնացել Լեռնային Ղարաբաղն անօրինական հռչակելուց, այլև ակտիվորեն համագործակցել է Լեռնային Ղարաբաղի հետ՝ որպես քաղաքական միավորի։ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ԵԱՀԿ-ին հանձնարարել է դառնալ հակամարտության միջնորդ։ Սա հանգեցրել է Մինսկի խմբի ստեղծմանը հակամարտության կողմերի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հետ աշխատելու համար։ Միացյալ Նահանգները մարդասիրական օգնություն է ցուցաբերել ուղիղ Լեռնային Ղարաբաղի կառավարությանը։ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ Միացյալ Նահանգների,

Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, տասնամյակներ շարունակ հանդիպել են Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ կարգավորման ուղիները քննարկելու համար։

Այս բոլոր փաստերը հանգեցնում են մեկ եզրակացության. միջազգային հանրությունը փաստացի ճանաչել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես քաղաքական միավոր, որը ներկայացնում է ինքնորոշման իրավունքն իրականացնող ժողովրդին: Երբ պետությունը հետադարձ ուժով քրեականացնում է այդ միավորի կառավարմանը մասնակցելը, դա ոչ թե օրենքի կիրառում է, այլ օրենքի տարածում դրա ստեղծումից առաջ կատարված իրադարձությունների վրա, որը խախտում է նաև միջազգային ներգրավվածության ամբողջ պատմությունը։

Այլ կերպ ասած՝ ամբաստանյալի աթոռին գտնվող մարդկանց մեղադրում են մի այնպիսի՛ մարմնում կառավարման գործառույթներ իրականացնելու համար, որը միջազգային իրավունքը երբեք անօրինական չի ճանաչել: Միջազգային պրակտիկայում նման հետապնդման իրավական նախադեպ գոյություն չունի։

**Նյուրնբերգը ստեղծել է միջազգային արդարադատության նախադեպեր: Բաքուն այդ նախադեպերը խախտում է:**

## 8. ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՐԱԴՈՔՍ. Ի՞նչ պետք է պաշտպանեին Նյուրնբերգյան սկզբունքները

Նյուրնբերգյան սկզբունքները ստեղծվել են հենց նրա համար, որ պետությունները չկարողանան անպատիժ կերպով իրականացնել էթնիկ հալածանքներ և ժողովուրդների տեղահանություն: Այդ սկզբունքների կիրառումը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ անխուսափելիորեն հարցեր է առաջացնում 2023 թվականի սեպտեմբերին ավելի քան 100,000 էթնիկ հայ քաղաքացիական անձանց հարկադիր արտաքսման վերաբերյալ:

Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը հրապարակայնորեն քննադատել է Ալիևի համեմատությունը՝ այն անվանելով անընդունելի։

Ավելին, 2023 թվականին Արդարադատության միջազգային դատարանը պաշտոնապես որոշել է, որ Ադրբեջանը խախտել է էթնիկ հայերի նկատմամբ ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան: Երբ պետությունը, որի վարքագիծը ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինը բնութագրել է որպես ռասայական խտրական, իր սեփական դատավարությունները համեմատում է Նյուրնբերգյան դատարանի՝ մի ինստիտուտի հետ, որը

ստեղծվել է հատուկ ռասիզմի և ցեղասպանության դեմ պայքարելու համար, ապա դա պարզապես անտեղի համեմատություն չէ: Այստեղ խոսքը ճիշտ հակառակի մասին է:

Պարզ ասած՝ Իլհամ Ալիևը, որը հրապարակային կերպով համեմատում է հայ առաջնորդներին նացիստների հետ, ղեկավարում է մի պետություն, որն Արդարադատության միջազգային դատարանի կողմից պաշտոնապես մեղավոր է ճանաչվել ռասայական խտրականության համար, որի վերացման նպատակով ստեղծվել է Նյուրնբերգյան դատարանը: Սա միայն բարոյական պարադոքս չէ, սա մեղադրանքի հայելային արտացոլում է. այն մարդը, որը մեղադրում է ուրիշներին նացիստական դարաշրջանի հանցագործությունների մեջ, հենց ինքն է միջազգային իրավունքի ուժով ճանաչվել ռասայական խտրականության մեջ ներգրավված, ընդ որում՝ հենց այն մարդկանց նկատմամբ, որոնց առաջնորդներին դատում է:

**Երբ պետության առաջնորդը, որի իշխանության օրոք տեղի է ունեցել էթնիկ բնակչության զանգվածային տեղահանություն, հիշատակում է Նյուրնբերգյան դատարանը, նա ինքնաբերաբար դիմում է իրավական մի գործիքի, որը ստեղծվել է հենց նման նախադեպերի դեմ:**

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նյուրնբերգյան դատավարությունը միջազգային իրավունքի կոթող է: Հենց այդ պատճառով էլ դրա հետ ցանկացած համեմատություն պետք է համապատասխանի դատավարության սահմանած չափանիշներին՝ թափանցիկություն, դատավորների միջազգային կազմ, պաշտպանության իրական իրավունք, անմեղության կանխավարկած և փաստաթղթավորված հանցագործություններ:

Ըստ այս բոլոր չափանիշների՝ Բաքվում ընթացող գործընթացները ոչ թե պարզապես չեն համապատասխանում Նյուրնբերգին, այլ դրա ճիշտ հակառակն են:

Արդարադատության միջազգային դատարանի կարծիքով հենց Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունն է համակարգված կերպով խախտել ռասայական խտրականության արգելքը: Նյուրնբերգը ստեղծվել է հենց այդպիսի խախտումների կրկնությունը թույլ չտալու համար: Երբ ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմնի կողմից ռասիզմի մեջ մեղավոր ճանաչված պետությունը հղում է անում Նյուրնբերգին, դա պարզապես պատմական վրիպակ չէ: Դա դրա վառ դրսևորումն է:

Պատմական համեմատությունները սուր գործիք են: Դրանք անզգույշ օգտագործողները հաճախ իրենք իրենց են վնասում:

Եվս մեկ, վերջին նկատառում: Ռուբեն Վարդանյանը՝ այն մարդը, որին Ալիևը համեմատել է նացիստների հետ, վերականգնել է Շուշիի մզկիթը: Մուսուլմանական պաշտամունքի վայր: Իր սեփական և այն միջոցներով, որոնց հայթայթմանն անձամբ օգնել է: Իսկ հարցը, թե ինչ է կատարվում հայկական եկեղեցիների հետ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքում, մնում է բաց:

Ալիևն ասել է. «Պատկերացրեք Նյուրնբերգը»: Մենք պատկերացրինք ու տեսանք, որ համեմատությունն անտեղի է: